



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2014 թվականի N 1293 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 31-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման և պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը հաստատելու մասին>> N 350-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) III բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆԻ ՍՏԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ>>.

2) 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով. <<10.1. Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար վճարումները կարող են կատարվել նաև

պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով՝ բացառությամբ նոր ներմուծված և ճանապարհային ուստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների: Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար տիրապետողը պետական վճարումների էլեկտրոնային համակարգ է մուտքագրում տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը և տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի համարը, որից հետո տվյալների ընդհանուր բազայից համակարգը տեղեկատվություն է գեներացնում՝ տրանսպորտային միջոցի տեսակի, արտադրման տարեթվի, շարժիչի հզորության, գույքի հաշվառման համարի, սեփականատիրոջ, հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) կամ հանրային ծառայությունների հաշվեհամարի (ՀՕՀ) (առկայության դեպքում) և վճարման ենթակա պարտավորությունների մասին: Տեղեկատվությունը տրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի հետ համեմատելուց հետո համընկնման դեպքում տիրապետողը մուտքագրում է բնակության (առաքման), էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը>>.

3) 12-րդ կետի 2-րդ ենթակետը <<2-րդ հատվածը>> բառերից հետո լրացնել <<կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված 20-նիշանոց ծածկագիրը>> բառերով.

4) 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին կետով. <<15.1. Տիրապետողը սույն կարգի 10.1-ին կետով սահմանված տեղեկատվությունը մուտքագրելուց հետո պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով կատարում է գույքահարկի, տեխնիկական զննության համար նախատեսված ծառայության վճարի, պետական տուրքի, բնապահպանական վճարի, ինչպես նաև փոստային ծառայության համար սահմանված վճարումները>>.

5) 27-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 27.1-ին և 27.2-րդ կետերով.
<<27.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով սույն կարգի 15.1-ին կետին համապա-

տասխան վճարումներն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում լրացնում և տիրապետողի կողմից նշված հասցեով՝ փոստային ծառայության միջոցով, առաքում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ձևի տեխնիկական զննության կտրոն: Տեխնիկական զննության կտրոնի դիմային մասի քառակուսի վանդակում փակցվում է հաջորդ տեխնիկական զննության անցկացման ամիսը նշող՝ հռոմեական թվերով նշված հերթական համարը:

27.2. Նշված հասցեում տիրապետողի բացակայության դեպքում փոստային ծառայության կողմից տասնօրյա ժամկետում տեխնիկական զննության կտրոնը կրկին առաքվում է: Երկրորդ անգամ բացակայության դեպքում՝ տիրապետողն այնուհետ տեխնիկական զննության կտրոնը կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանից>>.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 35-րդ կետով.

<<35. Տեխնիկական զննության համար սույն կարգի 15.1-ին կետով սահմանված վճարումները կարող են կատարել նաև Հայաստանի Հանրապետության պետական վճարումների էլեկտրոնային համակարգում ներառված համայնքներում հաշվառված տեխնիկական միջոցների տիրապետողները>>:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով պահանջվող տեղեկատվության (բացառությամբ վճարման ենթակա պարտավորությունների վերաբերյալ) տրամադրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում կազմակերպել բոլոր համայնքներում փոխադրամիջոցների գույքահարկի բազայի (հենքի) ստեղծման և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրման աշխատանքները:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ապահովել 2-րդ և 3-րդ կետերով ստացված տեղեկատվության մշակումը և ինտեգրումը պետական վճարումների էլեկտրոնային համակարգի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. նոյեմբերի 19
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ